ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ «Սասնա ծռեր» էպոսի ուսուցում՝ ժամանակակից մոտեցմամբ

ԱՌԱՐԿԱ՝ Գրականություն

ԿԱՏԱՐՈՂ՝ Սվետլանա Մարտիրոսյան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ Ակների միջնակարգ դպրոց

Աշխատանքը թույլատրված է պաշտպանության

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏ. ՂԵԿԱՎԱՐ՝ Սոնա Կամոյի Ալավերդյան

ԳՈՐԻՍ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3
«ՍԱՍՆԱ ԾՌԵՐ» ԷՊՈՍԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ՝ 9-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ 5
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 17
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հանրակրթության ոլորտի ընթացիկ փոփոխությունների համատեքստում «Գրականության» «Հայ գրականության» ծրագրերը կյանքի կոչելու համար շատ կարևոր է տվյալ առարկաների ուսուցման մեթոդաբանությունը, որը հնարավորություն կտա գտնել առարկաների ուսուցման արդյունավետությունը և գրավչությունը բարձրացնելու հնարներ և առաջնդել սովորողներին ինքնուրույն աշխատանքներ կատարելու: Դրա համար արդեն պետք է հենվել դպրոցի՝ իր գործառույթների շրջանակներում ստեղծած պատվարին և նպաստել ազգային արմատներով և միջազգային չափորոշիչներով կրթության նոր համակարգի կերտմանը:

Հարցն ավելի է կարևորվում, երբ խոսքը վերաբերում է այնպիսի ստեղծագործությունների ուսուցանմանը, որպիսին «Սասնա ծռեր» էպոսն է: Երկ, որը, ուրույն տեղ ունենալով հայ գրական «կանոնների» շարքում և լինելով մեր ինքնության բաղադրատարր, հիմք է հանդիսանում սովորողների մշակութային և մտավոր զարգացման համար, քանի որ այն առաջարկում է ոչ միայն պատուհան դեպի անցյալ, այլև հայելի՝ հասարակության մնայուն արժեքներն ու ազգի ոգին արտացոլող:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ հետազոտության **արդիականությունը** պայմանավորված է հանրակրթության ոլորտի զարգացման և փոփոխությունների լույսի ներքո հայ ժողովրդի բազմաշերտ էպոսի ուսուցման ժամանակակից մոտեցումների հարմարեցման և կատարելագործման անհրաժեշտությամբ:

Սույն հետազոտության **նպատակն** է ներկայացնել 9-րդ դասարանում «Սասնա ծռեր» էպոսի ուսուցման հնարավոր տարբերակ, որը հենվում է հանրակրթական պետական նոր չափորոշչի պահանջների վրա՝ նպաստելու հանրակրթական նոր հարացույցի զարգացմանը:

Առաջադիր նպատակին հասնելու համար մշակվել են հետևյալ **խնդիրները**.

- ուսումնասիրել համագործակցային մեթոդներով արդյունավետ աշխատանքային միջավայրի ստեղծման եղանակները,
- մշակել և ներկայացնել «Սասնա ծռեր» էպոսի դասավանդման տարբերակ, որը համահունչ է հանրակրթական պետական նոր չափորոշչի պահանջներին,
- գնահատել ուսուցման առաջարկվող տարբերակի հնարավոր ազդեցությունը սովորողների՝ նյութի յուրացման, քննադատական մտածողության և ինքնուրույն վերլուծություններ անելու կարողության զարգացման վրա,
- նպաստել կրթական մեթոդաբանության վերաբերյալ ավելի լայն խոսույթին՝ առաջարկելով ժամանակակից պահանջներին համահունչ դասի գործնական օրինակ:

Հետազոտության **օբյեկտը** «Սասնա ծռեր» էպոսի ուսուցումն է:

Հետազոտության **առարկան** հանրակրթության ոլորտի փոփոխությունների համատեքստում «Սասնա ծռեր» էպոսի չափորոշչահեն ուսուցման՝ արդյուվետ մեթոդներով կազմակերպումն է:

Հետազոտությունն իրականացնելիս կիրառվել են դիտման և բովանդակային վերլուծության **մեթոդները**: Բովանդակային վերլուծության միջոցով ուսումնասիրվել են *Հանրակրթական պետական չափորոշիչը*, առարկայական չափորոշիչը և ծրագիրը, «Սասնա ծռերի» հետ կապված ուսումնական նյութերը, դասապլանները՝ բացահայտելու հարցի վերաբերյալ ընդհանուր մոտեցումները և բարելավման հնարավոր ոլորտները: Դրա շնորհիվ մշակվել է խնդրո առարկա նյութի ուսուցման նոր գործելակերպ, որն էլ դասարանային դիտումների օգնությամբ «Սասնա ծռերի» դասաժամերին ուսումնասիրվել է, հատուկ ուշադրություն է դարձվել դասապրոցեսին աշակերտների ներգրավվածությանը և ուսումնական ընդհանուր միջավայրին:

«ՍԱՍՆԱ ԾՌԵՐ» ԷՊՈՍԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ՝ 9-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ

Դաս 1-ին

1. Դասապրոցեսին ապահովել դիդակտիկ նյութերով.

Պատկեր 1-ին. դիդակտիկ նյութերի օրինակներ

2. Ներկայացնել էպոսի ստեղծման պատմությունը (համառոտ):

Էպոսն սկսվում է այն պատմությամբ, թե ինչպես Բաղդադի խալիֆի ուղարկած հարկահանները, Հայաստան գալով, մի վառ լուսավորված աշտարակում հանկարծ տեսնում են հայոց Գագիկ թագավորի դստերը՝ Ծովինարին (ծովածին, ծովազն): Խելքահան լինելով նրա հիասքանչ ու հմայիչ կերպարանքից՝ նրանք թողնում են իրենց գործը, շտապում Բաղդաղ և խալիֆին հայտնում, որ անհրաժեշտ է, ինչ գնով էլ լինի, ձեռք բերել այդ գեղեցկուհուն: Խալիֆը դեսպաններ է առաքում Հայաստան, որոնք նրա անունից պահանջում են գեղեցկուհի Ծովինարին և սպառնում են չտալու դեպքում պատերազմել: Հայաստանում տարբեր կարծիքներ են ծայր առնում: Ոմանք պնդում են, թե պետք է տալ Ծովինարին, ոմանք էլ առաջարկում են պատերազմել և չտալ արքայադստերը, քանի որ խալիֆը կռապաշտ է, իսկ աղջիկը խաչապաշտ (այստեղ և էպոսի մնացած բոլոր մասերում մահմեդականները ներկայացված են իբրև կռապաշտներ): Սակայն Ծովինարն ինքը համակարծիք է լինում այն մարդկանց հետ, որոնք պնդում են, որ ավելի լավ է տալ իրեն և խնայել հազարավոր մարդկանց կյանքը:

3. Դիտել «Ճանապարհ դեպի Սասունցի Դավիթ» ֆիլմից հատվածներ:

«Ճանապարհ դեպի Սասունցի Դավիթ» ֆիլմն այն մասին է, թե ինչպես է Սասունցի Դավիթը դառնում փոքրիկ տղայի կատարելատիպը: Դավիթ անունով

փոքրիկ տղան, որ շատ լավ գիտի, թե ում պատվին են իր անունը դրել, ցանկանում է ուժեղ ու քաջ լինել Սասունցու նման: Տղայի նպատակն է դա, տղան էլ համառ է, քաջ է, իսկը Դավիթն է, միայն թե շատ են ծաղրում ընկերները, ասում են՝ «քեզնից ի՞նչ Դավիթ»: Դավիթը շատ է սիրում Սասունցի Դավթին, ամեն երազում Սասունցու հետ է զրուցում, էպոսն էլ ծայրից ծայր անգիր է արել: Շատ է ուզում գնալ Երևան, տեսնել իր հերոսի արձանը: Դավթի համառությամբ օժտված՝ նա որոշում ու միայնակ գնում է, հասնում արձանին, բարձրանում քարե Քուռկիկ Ձալալու վրա:

Այս ֆիլմը ցույց է տալիս, որ մեզնից յուրաքանչյուրի մեջ «Սասունցի Դավիթ կա», յուրաքանչյուրիս մեջ հայի արյուն է հոսում: Դավիթը իսկական հայի կերպար է, և մենք, ծանոթանալով Դավթի հետ, ծանոթանում ենք մեր գեների հետ, ստեղծում ենք մեր հայի կերպարը ու ապրում՝ այդպես ստեղծելով, շենացնելով, պահպանելով: Մենք շատ ենք ոգեշնչվում էպոսը կարդալուց կամ ֆիլմը նայելուց, իսկ երեխաները ավելի շատ են ոգեշնչվում, ուզում են համառ լինել ու հասնել իրենց երազանքին: Կարծում ենք՝ պետք չէ խանգարել նրանց երազել, նպատակասլաց առաջ ընթանալ դեպի այդ երազանքը. դրա շնորհիվ մենք գուցե ստանանք այն ապագան, որն այդքան շատ ուզում ենք տեսնել:

4. Դիտել «Սասնա ծռեր-Սասունցի Դավիթ» մուլտֆիլմից հատվածներ:

«Սասունցի Դավիթ» մուլտֆիլմը «Սասնա Ծռեր» էպոսի անիմացիոն տարբերակն է: Այն հայկական մուլտարտադրության հաջողված գործերից մեկն է: «Սասնա Ծռեր» էպոսը ամբողջությամբ արտահայտում է հայ ժողովրդի զորությունն ու քաջությունը, հայի գենի փոխանցումը սերնդեսերունդ և հայի համառությունն ու կամքի ուժը: Քանի որ սերունդները փոխվում են և երեխաներն էլ նույնպես փոխվում են, նրանց իսկական հայի կերպարը ցույց տալու լավագույն միջոցը «Սասունցի Դավիթ» մուլտֆիլմն է: Մուլտֆիլմը շատ լավ է նկարված, հերոսների պատկերները և հնչյունավորումը շատ համապատասխան է ընտրված, օրինակ՝ Սասունցի Դավթի կերպարը՝ խարտյաշ մազեր, խոշոր աչքեր, սուր դիմագծեր, իսկ ձայնը…: Մուլտֆիլմում էպոսից միայն երեք ճյուղեր են ներկայացված, հիմնականում Սասունցի Դավթի մասն է ներկայացված: Դավթի մանկությունը, մեծանալը, հզորանալը, հաղթելը, ամբողջը մանրամասն նկարված է մուլտֆիլմում: Մուլտֆիլմը նայում են բոլոր երեխաները, իսկ պատանիներն ու դեռահասները միանշանակ պետք է նայեն, որովհետև այն ցույց է տալիս, թե ինչպես են հաղթում հայերը:

5. Կատարել քննարկումներ, բանավեճեր, հարցեր և առաջադրանքներ (խրախուսել ակտիվ թիմին):

6. Տնային առաջադրանք. կարդալ էպոսը:

Դաս 2-րդ

1. Խմբային աշխատանք:

Կազմել 4 խումբ. յուրաքանչյուր խումբ ներկայացնի էպոսի մեկ ճյուղը:

1. Խթանման փուլ: Գրի առնել այն ամենի ցուցակը, ինչը նրանք գիտեն կամ էլ կարծում են, որ գիտեն: Ընդունվում են բոլոր մտքերը՝ անկախ այն բանից, թե դրանք ճիշտ են կամ սխալ:

Դրանից հետո սովորողներին առաջարկել հարցեր այն մասին, որոնք չեն քննարկվել, բայց ուղղակի կապ ունեն ուսումնասիրվող նյութի հետ:

Այս փուլում կարևոր է, որ ուսուցիչը հնարավորինս քիչ խոսի և սովորողներին խոսքը խթանելու հնարավորություններ ընձեռի: Ուսուցիչն այս փուլում հանդես է գալիս ուղղորդողի և սովորողների մտածողությունը խթանողի դերում: Նա ուշադիր լսում է բոլոր կարծիքներն ու տեսակետները: Արդյունքում իրականացվում է ճանաչողական կարևոր գործունեություն:

Խթանվում են սովորողների արդեն առկա գիտելիքները (իմացածը) տրված թեմայի շուրջ: Դա սովորողին պարտադրվում է վերլուծել սեփական գիտելիքները և մտածել այն մասին, թե ինչ են այնուհետև մանրամասնորեն ուսումնասիրելու: Այս սկզբնական գործունեության կարևորությունն ավելի պարզ կդառնա, երբ ներկայացվեն մյուս երկու փուլերը:

Այս փուլում սովորողները լրացնում են իրենց իմացածը մյուսների գիտելիքներով: Այսինքն՝աշակերտներն ստանում են նոր գիտելիքներ և ընդլայնում իրենց ունեցածը: Դա շատ կարևոր է, քանի որ գիտելիքները դառնում են հաստատուն, երբ դրանք ձեռք են բերվում արդեն իմացածի և հասկացածի ենթատեքստով: Սովորողները կառուցում են նոր պատկերացումներ. կարելի է ամրակայել այնպիսի հիմքեր, որոնցով նրանք կհասնեն նոր տեղեկատվության արագ ընկալմանն ու ճշգրտմանը: Սխալ հասկացվածը չի պարզվի, եթե տեղի չունենա արդեն գոյություն ունեցող գիտելիքների ու պատկերացումների աշխույժ և բուռն քննարկում:

Խթանման փուլի երկրորդ նպատակը սովորողներին ակտիվացնելն է: Շատ հաճախ սովորողները պասիվորեն նստում են դասարանում, լսում ուսուցչին կամ դասախոսին: Որպեսզի սովորողները գիտակցված, հիմնավորված կերպով ու քննադատաբար վերաբերվեն նոր տեղեկության ընյալմանն ու յուրացմանը, պետք է ակտիվորեն մասնակցեն ուսումնական գործընթացին: Մասնակցությունն ուսումնական գործընթացին ակտիվ է դառնում այն դեպքում, երբ սովորողը

նպատակաուղղված մտածում և իր մտքերն արտահայտում է սեփական բառերով, երբ նա հնարավորություն է ունենում ցուցադրել, ներկայացնել իր գիտելիքները: Այս դեպքում տեղի է ունենում գործուն մտածողական-ճանաչողական գործունեություն: Արդյունքում ստացված գիտելիքներն ավելի են ճշգրտվում և դառնում առավել խորությամբ իմաստավորված: Այժմ դրանք կարող են դառնալ կայուն հենք նոր գիտելիքների յուրացման համար: Դա հնարավորություն է տալիս նոր գիտելիքը արդյունավետորեն առնչել հնի հետ: Այդպիսով կարևորվում է խթանման փուլի երրորդ նպատակը, քանի որ յուրացումը նոր տեղեկատվությունը նախկին պատկերացումների հետ զուգորդելու և համակցելու գործընթաց է: Այս փուլում առաջարկվող թեմայի նկատմամբ ձևավորվում է հետաքրքրություն և որոշվում ուսումնասիրության նպատակը: Նպատակաուղղվածությունն ուսումնական գործընթացի արդյունավետության նախապայմանն է: Ուսումնական գործընթացում դիտարկվում են երկու տիպի նպատակներ՝ դասավանդողի առաջ քաշած կամ ուսումնասիրվող թեմայում ձևակերպված և սովորողի կողմից ընտրված: Ուսումնական գործունեության արդյունավետությունը պայմանավորված է նաև սովորողի նպատակներով: Խթանման փուլի արդյունավետությունը ցածր է, երբ դրանում չի ձևավորվում կայուն հետաքրքրություն:

Դասն ավարտել համառոտ զրույցով, անդրադարձով, գնահատումով:

Հանձնարարել տնային աշխատանք՝ «Բնութագրել էպոսի սիրելի հերոսին»:

Դաս 3-րդ

Դասի նախապատրաստական մասը պետք է սկսել կազմակերպչական հարցերի լուծումով, տնային աշխատանքների վերաբերյալ անհրաժեշտ պարզաբանումներով, նոր դասի թեման և նպատակը հաղորդելով:

Տեղեկություններ տալ Բաղդասարի մասին, որ կիսատ բռից ծնված Բաղդասարը ամուսնանում է վիշապից փրկած աղջկա հետ և գնում Բաղդադ (տանը համացանցից գրել տեղեկություններ Բաղդասարի մասին):

Խորհրդանիշներ

Էպոսում երևում են կրակի պաշտամունքի հետքեր, որոնք բնորոշ են հեթանոսական շրջանին: Հանդիպում են նաև հնագույն ժամանակներից մնացած հավատալիքներ՝ ջրի, լույսի, հողի, երկնային լուսատուների և նախնիների պաշտամունք: Մեծ և Փոքր Միհրները կապվում են Միհր աստծո հետ: Առասպելում դա վառ արտահայտվում է Փոքր Միհրի կերպարի մեջ, ով համարվում էր էպոս մտած Միհր արեգակը:

Լուսնային և արեգակնային հատկանիշներով և գուշակության ու կախարդության շնորհներով էին օժտված նաև էպոսի կանայք՝ Դեղձուն Ծամը, Խանդութը և Գոհարը: Սանասարը և Բաղդասարը կապվում են հայ առասպելաբանության մեջ ամպրոպային հերոսների հետ, որոնք, կռվելով ջրի ակունքը փակող հրեշի հետ, սպանում են նրան և ազատում արեգակի աղջկան՝ այս դեպքում Դեղձուն Ծամին:

Խաչ Պատերազմին

Էպոսում բազմիցս արծարծվում է «Խաչ Պատերազմին» խորհրդանիշը: Հիշենք այդ դրվագներն ու փորձենք հասկանալ՝ դրանցում արծարծվող «Խաչ Պատերազմին»-ի ներքո ինչ է թաքնված:

«Խաչ Պատերազմի»-ն էպոսում արծարծվում է դիցերոսների բազմիցս կրկնվող երդումներում ու հիշեցումներում՝ «Յա, Մարութա բարձրիկ Աստվածածին, Խա՛չ պատերազմին, վեր իմ աջ թեւին», «Հիշեմ քեզ. հեր կենդանին, Խաչ Պատերազմին վեր իմ աջ թեւին», «Հիշա՛ Մարութա բարձր Աստվածածին, Հիշա՛, զԽաչ Պատերազմին, Ինչ վեր քո աջ թեւին, Ու թա՛փ տուր քեզ»:

«Խաչ Պատերազմին» միշտ «Տեր Կենդանին»՝ Արարիչ և «Աստվածածին» խորհուրդների հետ է հիշատակվում: Սա ասում է այն մասին, որ նրանք, ըստ էպոսի, տիեզերական խորհուրդների նույն ընտանիքին են պատկանում ու միմյանց հարազատ են: Արդեն գիտենք, որ «Տեր Կենդանին» Արարիչն է, իսկ Աստվածածինը՝ Աստվածամայր Անահիտը, հետևաբար այդ խորհուրդներից հետո նշվող «Խաչ Պատերազմին» նրանց որդին՝ արարչական ընտանիքի երրորդ անդամն է: Քանի որ էպոսում որտեղ «Խաչ Պատերազմին» արծարծվում է, միշտ արարող ուժի, զորության, էներգիայի ու հաղթության իմաստներ է արտահայտում, ապա ինքնին հասկանալի է դառնում, որ նա հեթանոս հայի Հուր Աստված Վահագն է՝ ծպտված «Խաչ Պատերազմի»-ով:

Քուռկիկ Ձալալի

Քուռկիկ Ձալալու խորհրդանիշը էպոսում ամենամշուշոտներից է, իսկ նրա խորհուրդը՝ ամենածպտվածներից: էպոսում Քուռկիկ Ձալալին հայ դիցերոսների (ընդհանրապես Սասնա տան) համար հույժ հարազատ, թանկագին ու խորհրդավոր մի բան է. այնքան կարևոր և թանկագին, որ նրանք իրենց կյանքը, թշնամու դեմ դուրս գալն ու հաղթելը չեն պատկերացնում առանց նրա:

Ոգեգիտության և երազաբանության մեջ ձին ոգեղենության, ուժի, աստվածատու շնորհների, կյանքի անկասելի ընթացքի, «մուրազի» խորհրդանիշ է: էպոսաստեղծ մեր ազգը այդ խորհրդանիշին է դիմել՝ արտահայտելու իր կյանքի՝ անչափ կենսալից աստվածատու խորհուրդներից մեկը: Եթե նկատի ունենանք, որ հինավուրց էպոսի

արտաքին սյուժետային կողմը միջնադարի դժնդակ ժամանակներում է ձևավորվել, ապա պետք է ասել, որ Քուռկիկ Ձալալին միջնադարյան Հայի երազի խորհուրդներից մեկն է, ու բնավ պատահական չէր միջնադարյան Հայի ոգու տեսլականում Ձիու տեսիլքի հայտնվելը:

Պատահական չէր նաև լեզվական ձևի՝ Քուռկիկ Ձալալի ընտրությունը: Ձին Քուռկիկ՝ հավերժ երիտասարդ, չծերացող, ժամանակ-տարածությունում հավերժ նորոգվող է, Ձալալին՝ հրեղեն, անմահ ոգի է և ո՞չ մարմնավոր գոյություն:

Մեթոդներ, որոնք հարմար են կիրառել խթանման փուլում.

- Մտագրոհ
- Խմբավորում
- Պրիզմա
- Մտածի՞ր - զույգ կազմի՞ր - քննարկի՞ր
- Հինգրոպեանոց շարադրություն
- ԳՈՒՍ աղյուսակի առաջին և երկրորդ սյունակ
- Հանձնարարված ընթերցանության առաջին քայլը

2. Իմաստի ընկալման փուլ: Այս փուլում սովորողը շփման մեջ է մտնում նոր տեղեկատվության, նոր մտքերի հետ: Այդ շփումը կազմակերպում է տեքստի ընթերցման, ֆիլմի դիտման, ելույթը լսելու կամ փորձի ձևով:

Այս փուլում սովորեցնողի ազդեցությունը նվազագույնն է սովորողի վրա: Սովորողներն առավել ինքնուրույն են և գործուն: Այս փուլը խիստ կարևոր է մանկավարժական գործընթացի իրականացման առումով: Դրա գլխավոր խնդիրն այն է, որ պահպանվեն սովորողների ակտիվությունը, հետաքրքրությունը և խթանման փուլում ձևավորված շարժման իներցիան: Լավ (սահուն, առոգանությամբ) կարդացողները տեքստի հատվածը նորից են կարդում: Լավ ունկնդիրները տեխեկությունն ընկալելիս՝ հաճախ հարցեր են տալիս կամ գրանցում այն, ինչ չեն հասկացել, որպեսզի հետագայում բացահայտեն դրանք: Բացի դրանից, երբ սովորողները վերահսկում են սեփական իմաստավորումը, ապա համեմատում են նոր տեղեկատվությունն իրենց արդեն ունեցած կայուն մտապատկերների հետ: Նրանք գիտակցված կերպով կապում են նորը հնի հետ և այդ կերպ կամուրջներ գծում հին և նոր գիտելիքների միջև, որպեսզի ստեղծեն նոր իմաստավորում:

Մեթոդներ, մեթոդական հնարներ, որոնք հարմար են կիրառել իմաստի ընկալմանփուլում.

- T-աձև աղյուսակ

- Գաղափարների քարտեզագրում
- Վենի դիագրամ
- Փոխգործուն նշանների համակարգ
- Բանավեճ
- Ձրույց
- Համառոտ դասախոսություն
- Կարուսել
- Ապագայի անիվ
- Խորանարդում
- Խճանկար
- Շրջագայություն պատկերասրահում և այլն

Կշռադատման փուլ: Այս փուլում են սովորողներն ամրապնդում նոր գիտելիքները և ակտիվորեն վերակառուցում սեփական պատկերացումները, որպեսզի դրանց մեջ ընդգրկեն նոր հասկացություններ: Սովորողները իսկապես նոր գիտելիքները դարձնում են իրենց սեփականը: Տեղի է ունենում յուրացում, որն ունի երկարատև բնույթ: Յուրացումը բնութագրվում է իրական ու երկարատև փոփոխություններով: Դրանք տեղի են ունենում միայն այն դեպքում, երբ սովորողներն աշխատում են սեփական պատկերացումների վերակառուցման վրա և առկա պաշարի մեջ ընդգրկվում է նորը: Այս փուլում իրականացվում են մի քանի կարևոր ուսումնական նպատակներ (օրինակ՝ ֆիլմի հերոսը):

- Սովորողները փորձում են նոր մտքերն ու տեղեկատվությունը արտահայտել սեփական բառերով: Դա անհրաժեշտ է, որպեսզի կազմավորվեն նոր պատկերացումներ:
- Կատարվում է ուսումնական նյութի երկարատև յուրացում: Դրա աստիճանը տարբեր մարդկանց մոտ տարբեր է լինում: Սովորողներն ամենից լավ յուրացնում են այն, ինչը հասկացել են սեփական մտավոր գործընթացում և արտահայտում են սեփական բառերով: Երբ տեղեկատվությունը վերաձևակերպվում է սեփական բառապաշարով, ապա ի հայտ է գալիս անձնական իմաստավորումը:
- Տեղի է ունենում սովորողների միջև մտքերի կենդանի փոխանակություն, որը նրանց հնարավորություն է տալիս ընդլանել սեփական արտահայտման բառարանը և ծանոթանալ տարբեր պատկերացումների հետ:

- Պատրաստվում են թեմայի վերաբերյալ պաստառներ:
- Կազմվում են նկարազարդ ալբոմներ:
- Էպոսից սովորել սիրելի հատվածներ (բնականաբար կլինի Թումանյանի մշակումից, որովհետև այն սիրված է մեծերի և փոքրերի կողմից):
- Ուշադրություն դարձնել ծուռ բառի բացատրությանը:
- Տարբերակել ասացող և պատում հասկացությունները:

Ստեղծագործական հմտություններն ու ունակություններն ցայտուն դրսևորում է կշռադատման «Հաստ և բարակ» հարցերի աղյուսակը լրացնելով: Քարտերը բաժանվում են աշակերտներին, որոնցից կպահանջվի կատարել ինքնուրույն դատողություններ, կբացահայտվեն յուրաքանչյուրի նախաձեռնողական հմտությունները:

«Հաստ հարցեր»	«Բարակ հարցեր»
3 բացատրություն բերեք, թե ինչու. . .	Ո՞վ. . .
Բացատրեք՝ինչու. . .	Ի՞նչ. . .
Ինչու՞ եք դուք մտածում,որ. . .	Ե՞րբ. . .
Ինչու՞ եք գտնում,որ. . .	Հնարավոր է, որ. . .
Ո՞րն է տարբերությունը. . .	Ինչպես անվանել. . .
Ենթադրենք՝ ի՞նչ կլինի, որ. . .	Ե՞ղել են արդյոք. . .
Ի՞նչ եթե. . .	Համաձա՞յն եք դուք. . .

Աղյուսակ 1-ին. «Հաստ և բարակ» հարցեր

Դաս 4-րդ

1. Գրել 5-րոպեանոց շարադրություն:

Օրինակ՝

1. «Հայ ժողովրդի կենսական ուժը, իր լավագույն ձգտումները, խոհերն ու զգացումները մարմնավորված են էպոսի գլխավոր հերոսի՝ Դավթի կերպարի մեջ: Դավիթը գերմարդկային ուժ ունեցող անխոցելի հսկա է՝ հայրենասեր, ժողովրդասեր, ռամիկի ու աշխատավորների պաշտպան, նա անձնուրաց քաջ է, մարդասեր, խաղաղասեր: Դավիթը լինելով հայ ժողովրդի սիրելի հերոսը՝ ժողովրդի կողմից շնորհվել է աստվածային տիտղոս՝ «Դավիթ» կոչումով: Ժողովուրդը սիրելով իր հերոսին՝ մանկությունից օժտել է ազատասիրական ոգով: Որպես հպատակության նշան՝ Մելիքը Դավթից պահանջում է անցնել թրի տակով. . . »:

2. «Դավթի հայրենասիրությունը ցայտուն կերպով երևում է Մսրա Մելիքի դեմ կռվի գնալու պահին: Նա երբեք անարդար կռիվ չի մղում: Նա կարիք չի զգում թշնամուն ծաղրելու, քանի որ նրան ոչ թե փառքի համար է ուզում հաղթել, այլ ժողովրդի բարօրության: Մսրա Մելիքի վրա հարձակվելուց առաջ նա երեք անգամ բարձրաձայն գոչում է.

- Էհե՛յ,
  Ով քնած է՝ արթուն կացեք,
  Ով արթուն է՝ ձիեր թամբեք,
  Ով թամբեր է՝ էլեք, հեծեք
  Չասեք Դավիթ գող-գող եկավ
  Գող- գող գնաց...»:[1]

3. «Խանդութ խանումը Դավիթի կինն էր, նա էլ Դեղձուն-Ծամի պես նպատակասլաց էր և ուներ մեծ սիրտ: Խանդութը նաև խորամանկ էր, քանի որ Դավթին իր մոտ բերեց գրեթե խաբեությամբ:

Դավիթը, չնայած նրան, որ այդքան հերոսություններ արեց և հիշվեց շատ լավ արարքների համար, գործել էր նաև մեղքեր: Նա խոսք էր տվել ամուսնանալ Չմշկիկ Սուլթանի հետ, բայց փախավ և ամուսնացավ Խանդութի հետ:

Դավիթը սպանվեց Չմշկիկ Սուլթանի աղջկա արձակած թունավոր նետից, քանի որ երկու անգամ խաբել էր աղջկա մորը: Իմ կարծիքով նա արժանացավ ճիշտ մահապատժի. . . »:

2. Լսել բոլորի աշխատանքները, կատարել ինքնագնահատում կամ փոխգնահատում, խրախուսել լավագույնին:

Այսպիսով, խթանում – իմաստի ընկալում – կշռադատում մոդելով կառուցված ուսուցումը դասավանդողին հնարավորություն է տալիս՝

- Ակտիվացնել սովորողների մտածողությունը
- Ընդգծել ուսուցման նպատակները
- Նպաստել գործուն բանավեճին
- Բարձրացնել ուսման շարժառիթները
- Ապահովել ակտիվ ուսումնական գործունեությունն
- Խթանել խորհրդածությունը
- Սովորողներին հնարավորություն տալ լսելու տարբեր կարծիքներ
- Ապահովել տեղեկատվության վերամշակումը սովորողների կողմից

[1] «Հայկական ժողովրդական էպոս»,երկրորդ հրատարակչություն, 1961թ. , Երևան, էջ 234:

- Նպաստել քննադատական մտածողության զարգացմանը և այլն

Ուսուցիչը նպաստում է որակական ուսման կայացմանը: Սովորողները կարող են ապագայում այդ գիտելիքները կիրառել պրակտիկայում: Ուսուցիչը դառնում է գործընկեր, ուսման մասնակից, իսկ սովորողները՝ գործուն յուրացնողներ: Այս ամենը վերածվում է հաստատուն գիտելիքներ ձեռք բերելու միջոցների: Սովորողները որոշ չափով դառնում են սովորեցնող, իսկ դասարանը վեր է ածվում միության: Դա նպաստում է նոր և հին գիտելիքներն ինտեգրելու կարողության ձևավորմանը: Դասավանդումը լավագույնն է այն ժամանակ, երբ սովորողները տեսնում են, թե ինչպես է իրականացվում ուսուցման գործընթացը: Այդ ձևով նրանք կարողանում են աստիճանաբար սովորել օգտագործել ստացված փորձը:

Այսպիսով, ԽԻԿ համակարգը մասնակիցներին տալիս է հիմք, որի շրջանակներում ներկայացվում են ուսումնական տարբեր գործողություններ: Սրանք էլ իրենց հերթին օգնում են ուսուցչին՝ ուղղորդելու աշակերտի ուսումնական գործընթացը: Այդ համակարգը ուսուցիչներին հնարավորություն է տալիս.

- Ակտիվացնել աշակերտների մտածողությունը
- Հետաքրքիր քննարկումներ ծավալել
- Աշակերտներին շահագրգռել սովորել
- Աշակերտներին ակտիվորեն ներգրավել ուսումնական գործընթացի մեջ
- Նպաստել դրական փոփոխությունների ձևավորմանը
- Խթանել կշռադատված մտածողությունը

Մեր վերջնական խնդիրն է երեխային սովորեցնել այդ մոդելն ինքնուրույն կիրառել, որպեսզի կարողանան դառնալ հասարակության փնտրված անդամներ: Այսօր կիրառելի են բազմաթիվ մանկավարժական տեխնոլոգիաներ՝ ավանդական և նորարարական: Մենք չենք կարող հստակ ասել, որ պետք է հրաժարվել ավանդական տեխնոլոգիայից և օգտագործել միայն ժամանակակից մեթոդներ, քանի որ դասավանդման լիարժեք մեթոդ գոյություն չունի, և որի դեպքում լիարժեք և դրական արդյունք կունենա: Ավանդական ուսուցման տեխնոլոգիան դաս-դասարանային համակարգի հիմքն է:

Ինտերակտիվ ուսուցումն ունի որոշակի ռիսկեր, որոնք անտեսել չի կարելի: Օրինակ՝ խմբային աշխատանքների ժամանակ որոշ աշակերտներ «գլուխ են պահում»: Արտաքուստ թվում է, թե երեխաներն ակտիվ են, բայց վերջում պարզվում է, որ մնացորդային գիտելիքների մակարդակը ցածր է: Նոր մանկավարժության մեջ չպետք է լինեն մեթոդների և հնարների հակադրում: Բոլոր մեթոդներն ու հնարները

ինչ-որ իրավիճակում կարող են օգտակար լինել:

Թեման յուրացնելու համար ամենահարմար տարբերակը դասագրքի «Հարցեր և առաջադրանքներ»-ի վրա ուշադրություն դարձնելն է (ամենաթույլ երեխան պատասխանում է թեկուզ մեկ հարցի):

3. Տնային աշխատանք. «Թվարկել էպոսի կին հերոսներին. ու՞մ կերպարն է ձեզ ամենաշատը դուր գալիս, ինչու՞»:

Դաս 5-րդ

1. Ունենալ առանձին առաջադրանքներ՝ նկարներ, խոսքեր, մեջբերումներ, որոնք կարելի է հանձնարարել խմբերին՝ արագ դասավորելու կամ լրացնելու:

2. Յուրաքանչյուրն արտասանի իր սովորած հատվածը և վերլուծի:

3. Հանձնարարել խմբերին կազմել էպոսի տոհմածառը.



Պատկեր 1-ին. «Սասնա ծռեր» էպոսի տոհմածառը

Դաս 6-րդ

1. Առանձին ժամ հատկացնել բառային աշխատանքին (տե՛ս դասագրքի էջ 88-121):

2. Տնային աշխատանք. «Աշխատանքն ավարտել տանը, ուշադրություն դարձնել ուղղագրությանը և սովորել անգիր»:

Դաս 7-րդ

1. Առանձին ժամ հատկացնել աշխարհագրական տեղանուններին՝ ընթերցելով հատվածներ (միջառարկայական կապեր):

2. Ուշադրություն դարձնել բնագրի և ժամանակակից գրողների մշակումների նմանություններին և տարբերություններին, նշել որ «Սասունցի Դավիթ» ճյուղը թատերգության են վերածել Հակոբ Օշականը (քնարախաղ), Վահան Թոթովենցը, Վաղարշ Վաղարշյանը (ԳՈՒՍ):

3. Տնային աշխատանք. «Բնագրից ընթերցել հատվածներ և վերլուծել»:

Դաս 8-րդ

Թեմատիկ աշխատանք. «Դավթի կերպարը»:

Թեմատիկ գրավոր աշխատանքը միավորային գնահատման մի տեսակ է, որի իրականացման ընթացքում սովորողն իր ստացած ուսումնական նյութը ներկայացնում է գրավոր:

Թեմատիկ աշխատանքները տրվում են ծրագրային որոշակի թեմա ուսուցանելուց հետո: Թեմատիկ գրավոր աշխատանքում պետք է ընդգրկվեն սովորողներին ներկայացվող չափորոշչային պահանջներին համապատասխան առաջադրանքներ՝ դրանց յուրացման մակարդակը բացահայտելու նպատակով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Համագործակցային մեթոդների կիրառմամբ աշխատանքային արդյունավետ միջավայրի ստեղծումը կարևոր նշանակություն ունի աշակերտների ուսումնառության մակարդակը բարձրացնելու համար: Այս մոտեցումը խթանում է թիմային աշխատանքի զգացումը, ներգրավվածությունը և ակտիվ մասնակցությունը էպոսի ուսումնասիրությանը:

2. «Սասնա ծռեր» էպոսի ուսուցման առաջարկվող տարբերակը համահունչ է նոր ՀՊՉ-ի պահանջներին: Այն ներառում է համապատասխան բովանդակություն, մանկավարժական ռազմավարություններ և գնահատման մեթոդներ, որոնք բավարարում են 9-րդ դասարանի աշակերտների կարիքները:

3. Ուսուցման առաջարկվող մեթոդոլոգիան էապես նպաստում է նաև սովորողների քննադատական մտածողության հմտությունների զարգացմանը: Նրանց խրախուսվում է վերլուծել, մեկնաբանել և գնահատել էպոսի տարբեր կողմերը՝ դրանով իսկ նպաստելով մշակութային և պատմական համատեքստի ավելի խորը ըմբռնմանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Սասունցի Դավիթ, հայկական ժողովրդական էպոս, երկրորդ հրատարակություն, Երևան, 1961:

2. Գասպարյան Դ., Գրականության 9-րդ դասարանի դասագիրք, Երևան, 2022:

3. Վ. Զաքարյան, Բազմաբնույթ մտածողության տեսության կիրառության հնարավորությունը ուսուցման գործընթացում, «Մանկավարժական միտք», Երևան, 2014:

4. Ճանապարհ դեպի Սասունցի Դավիթ, ֆիլմ, Հայֆիլմ,1987:

5. Սասնա ծռեր-Սասունցի Դավիթ, մուլտֆիլմ, Հայաստանի ազգային կինոկենտրոն, 2010: